ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՆՈՒՆԵՔԻՍԵՐՈՎ
ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԴԱՐ ԲԱՇԽՈՒՄ
Քաղվածք
ՀՅ Դաշնակցության
նախընտրական ծրագրից

ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- Արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականության իրագործում:
- Տնտեսական արդար մրցակցության ապահովում և ստվերային տնտեսության դեմ պայքար:
- Հարկային բեռի արդար բաշխում, ՀՆԱ նկատմամբ 25 տոկոս հարկահավաքման մակարդակի ապահովում, պետական բյուջեի եռապատկում:
- Աղքատության հաղթահարում արժանապատիվ կենսամակարդակ երաշխավորող աշխատանքի ապահովմամբ:
- Անաշխատունակներին նվազագույն կենսամակարդակ ապահովող ֆինանսական աջակցություն:
- Աշխատավարձերի բարձրացման և աշխատավորների իրավունքների պաշտպանության նպատակով կոլեկտիվ պայմանագրերի և սոցիալական գործընկերության ինստիտուտի լայն կիրառում:
- Բնակչության աճի քաղաքականության իրականացում՝ 2012թ. բնակչության թիվը հասցնելով 4 միլիոնի սահմանագծին ինչպես բնական աճի խթանման, այնպես էլ ներգաղթի քաղաքականության միջոցով:
- Երեխաների ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման ամբողջական համակարգի ներդնում: Ընտանիքում առաջին և երկրորդ երեխաների ծննդյան դեպքում հատկացնել 200,000-ական դրամ, իսկ երրորդ երեխայի դեպքում՝ 2,000,000 դրամ, չորրորդ երեխայի դեպքում՝ 2,500,000 դրամ: Հինգերրորդ երեխան ունեցող ընտանիքներին բնակարանի տրամադրում:
- 30,000 դրամ նվազագույն և առնվազն 50,000 դրամ միջին կենսաթոշակի սահմանում:
- 2008 թվից սկսած՝ երկրում առնվազն 50,000 դրամ նվազագույն աշխատավարձի սահմանում և պարբերաբար ինդեքսավորում:

ՇԵՆ ԳՅՈՒՂ՝ ԾԱՂԿՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Քաղվածք
ՀՅ Դաշնակցության
նախընտրական ծրագրից

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ

ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- Գյուղացիական տնտեսությունների ֆինանսավորման և վարկավորման ծավալների ավելացում:
- Գյուղական վայրերում սպասարկման ոլորտի, գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման խրախուսում:
- Գյուղատնտեսական մթերքների երաշխավորված իրացման մեխանիզմի ստեղծում:
- Ոռոգման համակարգի բարելավում, սուբսիդիաների տրամադրում ոռոգման ջրի բարձր ծախսեր ունեցող տարածաշրջանների գյուղացիական տնտեսություններին:
- Բնական աղետներից գյուղացիական տնտեսությունների ապահովագրման համակարգի ստեղծում:
- Ներհամայնքային, ինչպես նաև գյուղական բնակավայրերը հիմնական մայրուղիներին կապող ճանապարհների վերականգնում, նորերի կառուցում:
- Գյուղացիական տնտեսությունների միջև կոոպերացիոն կապերի ընդլայնում և զարգացում, համատեղ տնտեսավարման եղանակների կիրառում:
- Հինգ տարվա ընթացքում գյուղական շրջանների գազաֆիկացում:
- Գյուղական կենցաղի բարելավում:
- Հոգևոր և մշակութային կյանքի աշխուժացում, կրթական, առողջապահական, սոցիալական ծառայությունների որակի բարձրացում:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ է
ՍԱ ԵՐԵՎԱՆՆ է,
ԱՅՍՏԵՂ
ԵՍ ՏԱՆ ԵՄ
ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ
Քաղվածք
ՀՅ Դաշնակցության
նախընտրական ծրագրից

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- Երևանցիների ուղղակի քվեարկությամբ քաղաքապետի ընտրությունը և համամասնական ընտրակարգով Երևանի քաղաքային խորհուրդի կազմավորումը:
- Երևանի ճարտարապետական յուրահատուկ դիմագծի պահպանումը և կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը:
- Կանաչապատ տարածքների ու ջրային մակերեսների պահպանումը և մինչև 2012 թվականը դրանց եռապատկումը:
- Բնակարանային ֆոնդի պահպանումը, սպասարկման որակի բարձրացումը և սոցիալական բնակֆոնդի ձևավորումը:
- Ջերմամատակարարման լոկալ և կենտրոնացված համակարգերի վերականգնումն ու ներդնումը:
- 2009 թվականից ամենօրյա աղբահանության և սանիտարական մաքրության իրականացումը և աղբի վերամշակման էկոլոգիապես մաքուր մեթոդների կիրառումը:
- Նոր ճանապարհների, ավտոկայանատեղերի և ստորգետնյա անցումների կառուցումը, քաղաքի կենտրոնի բեռնաթափումը:
- Մետրոպոլիտենի ցանցի ընդլայնումը դեպի Աջափնյակ, Դավիթաշեն և Հարավ-Արևմտյան թաղամասեր:
- Ճանապարհային երթևեկության կանոնակարգումը, փողոցներում կարգ ու կանոնի հաստատումը:

Երևանին անհրաժեշտ է երևանցիների հոգատարությունն ու սերը և կենցաղային բարձր կուլտուրան: